

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 30 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի ծնարանային և հետծննդյան բաժինների հիմնանորոգման նախագծում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութ քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն» ծրագրերը.

«Աջակցություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության մտավոր խնդիրներ ունեցող երեխաների և երիտասարդների ցերեկային խնամքի կենտրոնին» իրականացվող ծրագիրը.

Հայկական բարեգործական ընդհանուր միության հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին աջակցություն» ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայրավանքի մոմավառության սրահի նախագծահաշվային աշխատանքների իրականացում», «Տանիքի հակասառեցման համակարգի կառուցում», «Էջմիածնի Մայր Տաճարի իջման սեղանի և կաթողիկոսական տապանաքարերի վերականգման աշխատանքների իրականացում» և «Էօրնեական հանրակրթական դպրոցի» աշակերտների հագուստի պատրաստման» ծրագրերը.

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվող «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» և «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվող ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող բնակարանի մասնակի վերակառուցման ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի հանրապետության Տավուշի մարզի Գետահովիտ և Նորաշեն համայնքների մանկապարտեզների ու Պառավաքար համայնքների բուժկետի ջեռուցման համակարգերի ստեղծում»,

«Հայաստանի հանրապետության Տավուշի մարզի Իջևան և Բաղանիս համայնքներում խաղահրապարակների տեղադրում», «Հայաստանի հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Ներքին Կարմիրաղբյուր, Նավուր և Այգեհովիտ համայնքների փողոցային լուսավորության ցանցի ստեղծում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի մրզի պահպանման սառնարանի կառուցում», «Հովանավորչություն», «Նախադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և երեխաների համար ժամանցի հնարավորությունների ստեղծում», «Սյունիքի մարզի մի շարք համայնքներում դպրոցների ենթակառուցվածքների բարեկարգում», «Սյունիքի մարզի մի շարք համայնքներում կրթական և մշակութային հաստատությունների կահավորում», «Սյունիքի մարզի մի շարք համայնքներում խմելու և ոռոգման ջրագծերի բարեկարգում», «Կահույքի մատակարարում Արագածոտնի մարզի Քուչակ և Լուսազյուղ համայնքների դպրոցներին ու Երնջատափ, Հարթավան և Արագած համայնքների նախակրթարանների», «Համակարգիչների մատակարարում Արագածոտնի մարզի Ապարան համայնքի N 1 և N 2 ու Երնջատափ, Ծաղկաշեն և Վարդենուտ համայնքների դպրոցներին», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկան համայնքի մանկապարտեզում ջեռուցման համակարգի տեղադրում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան, Այգեհովիտ և Ներքին Կարմիրաղբյուր համայնքներում մեկական ջերմոցի կառուցում» ծրագրերը.

«Ֆրութֆոլ Արմենիա» հիմնադրամի կողմից իրականացվող «Նուռ՝ նոր ուսումնական ռազմավարություն» ծրագիրը.

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2012 թվականի իրականացվելիք սոցիալական բարեգործական ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի թեքահարթակի կառուցում» ծրագիրը.

Վեստ Իսթ Դեյլոփմենթ» ներդրումային հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Աշտարակի խճուղու լուսավորության բարեկարգում» բարեգործական ծրագիր» ծրագիրը.

«Չքավոր երեխաների աջակցության ակցիա» հայաստան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ծովագյուղի մանակապարտեզի բարեկարգման և կրթության բարելավում բարեգործական ծրագիր» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: